31.08.2023թ.

ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ

«ԳՅՈՒՄՐՈՒ Գ.ՍԱՐՅԱՆԻ ԱՆՎԱՆ

ՀԱՄԱՐ 24 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ»

ՊՈԱԿ-ի ՏՆՕՐԵՆԻ

2023-2024 ՈՒՍՏԱՐՎԱ

ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ

ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ

ՊԼԱՆ

Դպրոցի ուսումնադաստիարակչական համադպրոցական միջոցառումների պլանը բաղկացած է հետևյալ բաժիններից՝

1. Ներածություն
2. Ազգային կրթության հայեցի դաստիարակության ուղղությամբ դպրոցի հիմնական խնդիրներ
3. Կազմակերպչական մաս
4. Սովորողների հիմնական, պարտադիր կրթության իրականացում
5. Ուսումնադաստիարակչական աշխատանքների կազմակերպում և կատարելագործում
6. Մանկավարժական կադրերի հետ տարվող աշխատանք, ուսուցիչ որակավորման գործի կազմակերպում, մեթոդամանկավարժական գործունեություն, ներդպրոցական վերահսկողություն:
7. Դպրոցի մանկապատանեկան կազմակերպությունների և ծնողական հանրույթի հետ տարվող աշխատանք, արտադասարանական, արտադպրոցական հարցեր:
8. Տնօրենին կից խորհրդակցություններում քննարկվող հարցեր:

	Աշխատանքի բովանդակությունը	Ժամկետ	Կատարող անձ	Ծանոթությու
1	Կատարել կոմպլեկտավորում դասարան-աշակերտ թվաքանակով	31.08	Հ.Հակոբյան	
2	Կոմպլեկտավորված դասարաններում նշանակել դասղեկներն մեթոդմիավորման նախագահներ՝ հաշվի առնելով մանկավարժների ունեցած հեղինակությունը ուսուցիչների, ծնողների, աշակերտների շրջանում:	31.08	Հ.Հակոբյան	
3	Կատարել դասաբաշխում ըստ նախորդ ուստարվա գնահատականների: Դասաբաշխում ու տարիֆիկացիան հաստատել ուստարվա անդրանիկ նիստում:	31.08	Հ.Հակոբյան	
4	Ելնելով մանկավարժական խորհրդի որոշումից՝ հակտացնել դպրոցական պարտադիր ժամեր և հաստատել դպրոցի ուսումնական պլանը:	31.08	Հ.Հակոբյան	
5	2023-2024 ուստարում իրականացնել Գյումրու N24 հիմնական դպրոցի գործունեության ներքին գնահատումը (առաջնորդվելով ՀՀ հանրակրթական ուսումնական հաստատության գործունեության ներքին և արտաքին գնահատման չափանիշների սահմանման և իրականացման կարգի), մասնավորապես 2-րդ, 5-րդ, 7-րդ դասարանների նոր չափորոշիչներով:	ուստարվա ընթացքում	տնօրեն, փոխտնօրեն ուսուցիչ	
6	Հաստատել տնօրենի տեղակալների և դասղեկների աշխատանքային պլանները և նպաստել դրանց կատարմանը:	31.08.	Հ.Հակոբյան	
7	Ուսուցչական հանրույթին ծանոթացնել հանրակրթական ուսումնական հաստատությունների սովորողների ուսուցման արդյունքների ընթացիկ ստուգում և գնահատման մեթոդական ցուցումներին:	սեպտեմբեր	Տնօրեն, փոխտնօրեններ	
8	Ապահովել կրթական գործնթացում մանկավարժական և հոգեբանական գիտությունների ուսուցման ժամանակակից մեթոդների, տեղեկատվական և հաղորդակցման	Ուստարվա ընթացքում	Տնօրեն, փոխտնօրեններ	

	կիրառմանը:			
9	Բոլոր դասարաններում տարին երկու անգամ անցկացնել կիսամյակային ամփոփիչ գրավոր աշխատանքներ:	Դեկտեմբեր մայիս	տնօրեն, փոխտնօրեններ	
10	Մանկավարժական խորհրդի նիստերն անցկացնել առնվազն 2 միսը մեկ անգամ՝ քննարկելով կատարված և հետագա աշխատանքները:	ուստարվա ընթացքում	տնօրեն, փոխտնօրեն	
11	Տնօրենին կից թռուցքաժողովներ անցկացնել ամեն երկուշաբտի օր, քննարկելով նախորդ շաբաթվա անելիքները, մասնակցությամբ փոխտնօրենների, գրադարանավարի, բուժքրոջ, զինղեկի, հաշվապահի:	ուստարվա ընթացքում	տնօրեն	
12	Խստորեն հետևել, որ տարածքի բոլոր երեխաներն ընդգրկվեն հանրակրթական ուսումնական հաստատություն:	ուստարվա ընթացքում	տնօրեն	
13	Ցուցաբերել օգնություն ծնողազուրկ աշակերտներին, ապահովել դասագրքերով, գրենական պիտույքներով, վերահսկել հաճախումները, կանխել դասից ուշացման դեպքերը, անհարգելի բացակայությունները: Ստուգել խնամակալության տակ գտնվող երեխաների կյանքի պայմանները և ցուցաբերել անհրաժեշտ օգնություն: Խստորել արգելել դրամահավաքությունը:	ուստարվա ընթացքում	տնօրեն, փոխտնօրեններ, դասղեկ	
14	Ամենօրյա աշխատանքով նպաստել, որ յուրաքանչյուր աշակերտ գիտակցի, որ ուսումնասիրվող առարկան ուղղված է ոչ միայն նրա բանականությանը, այլ նաև նրա ընդհանուր զարգացվածության բարձրացմանը:	ուստարվա ընթացքում	Մանկավարժա-կան հանրույթ, փոխտնօրեններ, դասղեկներ	

ԿՐԹԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ և ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՈՒՄ

	Աշխատանքի բովանդակությունը	Ժամկետ	Կատարող անձ	Ծանոթություն
1	Կրթադաստիարակչական աշխատանքների հիմքում դնել ազգային կրթության ու դաստիարակության ծրագիրը:	ուստարվա ընթացքում	հանրույթ	
2	Ստեղծել ուսումնական պլանների, ծրագրերի ուսուցման ու դաստիարակության ձևերի ու մեթոդների կիրառմամբ ապահովել պետական պահանջների մակարդակով սովորողների կրթության պետական չափորոշիչներով:	տարվա սկիզբ	հանրույթ	
3	Դաստիարակչական աշխատանքը կառուցել հաշվի առնելով սովորողների հետաքրքրությունները, նախասիրությունները ու ընդունակությունները, փոխադարձ հարգանքի ու համագործակցության սկզբունքով:	տարվա սկիզբ	ՄԿԱ գծով տեղակալ, հանրույթ, դասղեկներ	
4	Յուրաքանչյուր առարկայի դասավանդման հիմքում դնել մայրենի լեզուն:	ուստարի	հանրույթ	
5	Մեծացնել պատասխանատվությունը մատենավարության, օրագրերի, բառատետրերի, տեղեկագրերի, գրականության տետրերի օգտագործման, սեփական նախագծումների ու ընդունված որոշումների ժամանակին կատարման գործում:	ուստարվա ընթացքում	փոխտնօրեններ դասղեկներ	
6	Աշակերտների հոգեբանության մեջ սերմանել անհանդուրժողականություն և պայքարի վճռականություն մեր հասարակության մեջ նկատվող չարի, կեղծիքի, անբարոյականության, իրավախախտման բոլոր տեսակի դրսևորումների դեմ:	ուստարվա ընթացքում	հանրույթ	

7	Վերահսկողություն իրականացնել հանրակրթական դպրոցում դասավանդման բովանդակության, սովորողների գիտելիքների յուրացման որակի, նրանց վարքի, արտադասարանական և արտադպրոցական աշխատանքների կողմից իրենց աշխատանքային պարտականությունների կատարման նկատմամբ:	ուստարվա ընթացքում	տնօրեն տնտեսվար	
8	Ապահովել բյուջետային հատկացումների, ՀՀ օրենսդրությամբ չարգելված այլ աղբյուրներից օրենքով սահմանված կարգով ստացված միջոցների արդյունավետ օգտագործումը, ուսումնականյութական բազայի հաշվառումը, պահպանումը, համալրումը:	ուստարվա ընթացքում	տնօրեն	
9	Սովորողների գիտելիքների որակը բարձրացնելու նպատակով կատարել դասալսումներ: Դասը վերլուծելուց հետո տալ առաջադրանքներ, և հետագա դասլսումների ժամանակ ստուգել առաջադրանքների կատարումը:	ուստարվա ընթացքում	տնօրեն փոխտնօրեններ	
10	Վերահսկողություն իրականացնել ուսումնական աշխատանքի ընթացքի, սովորողների առաջադիմության նկատմամբ, կանոնակարգել սովորողների ուսումնական ծանրաբեռնվածությունը	ուստարի	փոխտնօրեն	
11	Մասնակցել բոլոր միջոցառումների, բաց դասերին, քննարկել, խորհուրդներ տալ:	ուստարվա ընթացքում	տնօրեն, փոխտնօրեններ	
12	Դպրոցում ունենալ հետ մնացող, չառաջադիմող աշակերտների հաշվառման տետր, զբաղվել հետ մնացող աշակերտների հարցերով, պարզել պատճառը, օգնել:	ուստարվա ընթացքում	փոխտնօրեններ ուսուցիչներ	

13	ապահովել կրթության գործի գիտամեթոդական պահանջը հյութի գիտական ու արդիական հիմնավորվածությունը, աշակերտների գիտելիքների որակը: Ներդնել այլընտրական ծրագրերի դրականն ու ուսանելին	ուստարվա ընթացքում	փոխտնօրեն	
14	Դասապրոցեսում ու նրանից դուրս ուսումնասիրել ազգային մշակույթը, երաժշտությունը, թատերական արվեստը, ժողովրդական արհեստները, առաքելական եկեղեցու պատմությունը:	ուստարվա ընթացքում	փոխտնօրեններ	
15	Տարրական դասարաններում սկզբնավորել անձի ձևավորումը, հայտնագործել սովորողների ունակությունները, կարողությունները: Սովորեցնել գրել, կարդալ, հաշվել տալ ընդհանուր պատկերացում բնության, հասարակության, մարդու ու նրա աշխատանքի մասին: Հետևել աշակերտների վայելչագրությանը, ճարտասանությանը, դաստիարակել հայրենի բնությունն ու աշխարհը խորությամբ ճանաչելու, սիրելու ու պահպանելու ունակություններ:	ուստարվա ընթացքում	փոխտնօրեննոր դասվարներ	
16	Խաղային գործունեության կազմակերպման ձևերը համարել ուսումնական գործընթացի ակտիվածման կարևոր նախապայման /1-4-րդ դասարաններ/	ուտարվա ընթացքում	փոխտնօրեններ դասվարներ	
17	Միջին դասարաններում ապահովել արժանապատվություն, ինքնուրույնություն, մտածողություն, կազմակերպել հասարակական կենսադիրքորոշման գործում ընդունակությունների զարգացման ու գիտությունների յուրացման աշխատանքներ:	ուստարվա ընթացքում	հանրույթ	
18	8-9-րդ դասարաններում ապահովել հանրակրթական պատրաստության ավարտումը՝ ուսուցման լայն ու	ուստարվա ընթացքում	փոխտնօրեններ	

	խորացված տարբերակման հիման վրա: Պայմաններ ստեղծել սովորողների հետաքրքրություններն առավել լիակատար բացահայտելու հասարակական կյանքում նրանց գիտակցված ու գործուն ներգրավման ուղությամբ:			
19	Ապահովել առարկայական ու միջառարկայական կապը անհատական կամ խմբակային կոնսուլտացիաների միջոցով:	ուստարվա ընթացքում	փոխտնօրեններ հանրույթ	
20	Ուսումնական մեջ առավել աճքի ընկնող, համապատասխան նախասիրություններ ունեցող աշակերտներին նախապատրաստել օլիմպիադայի: Ուսուցչի գնահատման չափանիշ ընդունել աշակերտների գիտելիքների վերջնական մակարդակը: Տալ ստուգողական աշխատանքներ լեզուներից և մաթեմատիկայից: Անհատական աշխատանք ծավալել առարկաների հետ, կազմակերպել շերտավորված աշխատանք:	ուստարվա ընթացքում	փոխտնօրեններ հանրույթ	
21	Աշակերտների գիտելիքներն ամփոփել կիսամյակը մեկ		փոխտնօրեններ	
22	Հետևողականորեն բարձրացնել լեզուների դասավանդման որակը: Սովորողներին զինել բարոյական իդեալներով: Գեղագիտական պահանջմունքներին հոգեպես հարուստ, ներդաշնակորեն զարգացած անհատի ձևավորման գործում: Մշակել կարդալու տեխնիկա, գրավոր ու բանավոր խոսք, հարգանք ու սեր դաստիարակել դեպի գիրն ու գրականությունը: Լեզուների ուսուցումը զուգակցել գրական ստեղծագործությունների ուսուցման հետ: Շարունակել դասավանդել վայելչագրություն, համաշխարհային ու սփյուռքահայ գրականություն,	ուստարվա ընթացքում	փոխտնօրեններ հայոց լ. և գրականության ուսուցիչներ	

	պետություն և իրավունք առարկաներ:			
23	Բնագիտական հոսքի առարկաների դասավանդման ընթացքում սովորողների դասավանդման ընթացքում սովորողներին ծանոթացնել ազգային գիտության նվաճումներին, հայ և սփյուռքահայ գիտնականների գիտական ներդրումներին: Նպատակային օգտագործել ուսումնադաստիարակչական պարագաները՝ քարտեզ, աղյուսակ, տեղեկատու, ինքնաշեն նյութեր: Կազմակերպել բացօթյա դասեր, թեմատիկ էքսկուրսիաներ: Ուսուցիչներին կապել մասնագիտական մամուլի հետ: Ուսումնասիրել մեթոդական գրականությունը:	ուստարվա ընթացքում	փոխտնօրեններ հանրույթ	
24	Տնօրենին կից խորհրդակցություններում անդրադառնալ տարբեր առարկաների դասավանդման որակին, կրթադաստիարակչական աշխատանքներում կատարվող թերություններին:	ուստարվա ընթացքում	տնօրեն փոխտնօրեններ	
25	Պատասխանատվության ենթարկել այն ուսուցիչներին, որոնք կզբաղվեն աչքակապությամբ, չեն ապահովի որակ, բավարար առաջադիմություն: Խրախուսել առաջավոր և բարեխիղճ ուսուցիչներին:	ուստարվա ընթացքում	տնօրինություն	
26	Նպաստել աշակերտների որակական առաջադիմության բարձրացմանը:	ուստարվա ընթացքում	փոխտնօրեններ հանրույթ	
27	Պարտադիր կազմակերպել ֆիզիկական կուլտուրայի դասերի անցկացումը սպորտային համազգեստով: Հետևել աշակերտների ֆիզիկական զարգացմանը: Մեծացնել շախմատի դերը դպրոցում:	ուստարվա ընթացքում	ֆիզկուլտուրայի ուսուցիչներ	

28	Կենսական գիտելիքներ ապահովել աշխատանքի ուսուցման ու սպասարկման առարկաներ դասավանդման ժամանակ: Աշակերտներին ներգրավել դպրոցական գույքի վերանորոքման, դպրոցի ու նրա շրջակայքի բարեկարգման, ինքնաշեն սարքերի պատրաստման աշխատանքներին:	ուստարվա ընթացքում	աշխատանքի ուսուցման ուսուցիչներ, դասղեկներ, տնտեսվար	
29	Ակտիվացնել դպրոցական գրադարանի աշխատանքները: Ապահովել աշակերտ-գրադարան, ուսուցիչ-գրադարան կապերը: Հարստացնել գեղարվեստական գրականության և դասագրքերի ֆոնդը: Գրադարաններում ստեղծել և թարմացնել մեթոդական գրականությունն արտացոլող անկյուններ:	ուստարվա ընթացքում	գրադարանա-վարներ	

ՄԱՆԿԱՎԱՐԺՆԵՐԻ ՀԵՏ ՏԱՐՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔ, ՈՒՍՈՒՑՉԻ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ, ՆԵՐԴՊՐՈՑԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ

	Աշխատանքի բովանդակությունը	Ժամկետ	Կատարող անձ	Ծանոթություն
1	Դպրոցի փոխտնօրեններից պահանջել կազմակերպել համապատասխան օգնություն սկսնակ կամ սակավափորձ ուսուցիչների շրջանում: Բնութագրել յուրաքանչյուր ուսուցչի աշխատանքը՝ ելնելով դասալսումներից	ուստարվա ընթացքում	փոխտնօրեններ	
2	Առանձին ուսուցիչների ընդգրկել կազմակերպվող սեմինարներին, դասընթացներ մշակել ու խորհրդում մասսայականացնել մեթոդական փորձը: Տարածել ստեղծված փորձը, կազմակերպել մանկավարժական զեկուցումներ: Փոխտնօրենների միջոցով անցկացնել սեմինար-խորհրդակցություններ:	ուստարվա ընթացքում	փոխտնօրեններ	
3	Սահմանել վերահսկողություն բոլոր օղակների նկատմամբ, անմիջապես կանխել ուսուցիչ-աշակերտ հարաբերություններում ծագող կոնֆլիկտները: Կտրականապես արգելել դասաժամերից անհարգելի բացակայությունները:	ուստարվա ընթացքում	տնօրինություն, ծնողկոմիտե. դասղեկներ	
4	Սահմանել վերահսկման հետևյալ կարգը՝ ա) տնօրենին՝ ծնողական կոմիտե-մանկավարժական կազմակերպությունների գործունեություն, դպրոցի ֆինանսա-տնտեսական միջոցների վերահսկողություն: բ) փոխտնօրեններ՝ 1-9-րդ դասարանների կրթադաստիարակչական աշխատանքներ, արտադպրոցական աշխատանքներ:	ուստարվա ընթացքում	տնօրեն, փոխտնօրեններ	

ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ և ԾՆՈՂԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՀԵՏ ՏԱՐՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

	Աշխատանքի բովանդակությունը	Ժամկետ	Կատարող անձ	Ծանոթություն
1	Յուրաքանչյուր մանկավարժի պարտքը համարել այն ամեն մի աշակերտի անհատականության խոր ուսումնասիրությունը, դասապրոցոսում և նրանից դուրս դաստիարակչական խնդիրների լուծումը՝ սկսած բարեկիրթ վարվեցողության նորմերից մինչև ազգասեր, հայրենասեր քաղաքացին:	ուստարվա ընթացքում	հանրույթ	
2	Համագործաքցել քաղաքի այլ մանկապատանեենակն կազմակերպությունների հետ	ուստարվա ընթացքում	տնօրինություն	
3	ՀՀ խորհրդանիշերի ուսուցումը ծառայեցնել որպես ազգային զարթոնքի և քաղաքական անկախության դաստիարակության լավագույն միջոց:	ուստարվա ընթացքում	դասղեկներ, զինղեկ	
4	Անցկացնել ամենամսյա միջոցառումներ աշակերտական միասնական հանրույթ ստեղծելու նպատակով: Սաների մեջ սերմանել սեր դեպի հարազատ տունը, դպրոցը, փողոցը, քաղաքը, հանրապետությունը:	ուստարվա ընթացքում	հանրույթ	
5	Ծնողազուրկ, հատուկ ուշադրության արժանի աշակերտներին մշտապես պահել ուշադրության կենտրոնում, ամրացված մանկավարժների միջոցով կազմակերպել անհատական աշխատանք	ուստարվա ընթացքում	հանրույթ	
6	Կազմակերպել մանկապատանեկան աշխատանքներ, պրոպագանդել դպրոցում սովորող աշակերտների ստեղծագործությունները:	ուստարվա ընթացքում	ՄԿԱ գծով տեղական, կազմակերպիչ դասղեկներ	

7	Ըստ աշակերտների ունակությունների և նախասիրությունների կատարել ընդգրկումներ գեղագիտական կենտրոնում, դպրոցական պալատում	ուստարվա ընթացքում	ՄԿԱ գծով տեղակալ, կազմակերպիչ	
8	Ընտրել դասարանական ծնողական խորհուրդներ, ապահովել հասարակության ակտիվ մասնակցությունը: Ուրբաթ օրը հայտարարել ծնողների բաց դռների օր: Թույլատրել այդ օրը ծնողներին լսել դասերը:	ուստարվա ընթացքում	փոխտնօրեն դասղեկներ	
9	Դասղեկական աշխատանքը նպատակամղել իրեն վստահված աշակերտական հանրույթին խորապես ճանաչելու ընտանեկան միջավայրը լիովին ուսումնասիրելու ուղղությամբ: Պարբերաբար կազմակերպել շաբաթօրյակներ:	ուստարվա ընթացքում	փոխտնօրեն	
10	Հրավիրել ծնողական փնջային ժողովներ, հանդես գալ ծնողներին հուզող զեկուցումներով:	ուստարվա ընթացքում	Ծնողկոմիտեի նախագահ, ՄԿԱ գիտով տեղակալ	

ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ և ՍԱՆԻՏԱՐԱՀԻԳԻԵՆԻԿ ՀԱՐՑԵՐ

	Աշխատանքի բովանդակությունը	Ժամկետ	Կատարող անձ	Ծանոթություն
1	Կազմել տարիֆիկացիա:	սեպտեմբեր	տնօրեն	
2	Կազմել ծախսերի նախահաշիվ, քննարկել դպրոցի խորհրդում և ներկայացնել մարզպետարանի ֆինանսական բաժին:	ուստարվա ընթացքում	տնօրեն	
3	Ժամանակին դիմել մարզպետարանին և տեղական ինքնակառավարման մարմիններին՝ շենքի վերանարազման. գույքի ձեռք բերման նպատակով համապատասխան ֆինանսավորում ստանալու համար:	ուստարվա ընթացքում	տնօրեն	
4	Աշխատանք տանել դպրոցական գույքի, սարքավորումների, ուսումնական տեխնիկական միջոցների, դիդակտիկ պարագաների և այլ նյութերի օգտագործման և պահպանման ուղությամբ:	ուստարվա ընթացքում	դաստ. գծով փոխտնօրեն	
5	Կատարել դպրոցի հաշվեկշռում եղած գույքի ու սարքավորումների հաշվառում:	նոյեմբեր	դաստ. գծով փոխտնօրեն	
6	Ապահովել շենքի ջերմային, լուսային և օդային ռեժիմը: Կանոնավոր վիճակում պահել հակահրդեհային միջոցները:	ուստարվա ընթացքում	դաստ. գծով փոխտնօրեն	
7	Բարեկարգ վիճակում պահել դպրոցի շենքի բակը, մարզահրապարակը: Հետևել անվտանգության տեխնիկայի կանոնների պահպանմանը:	ուստարվա ընթացքում	տնտ. գծով փոխտնօրեն	
8	Հսկողություն սահմանել սովորողների սննդի կազմակերպման նկատմամբ:	ուստարվա ընթացքում	տնօրեն, փոխտնօրեն, ծնողխորհուրդ	

9	Հետևել դպրոցի ջեռուցման ներքին ցանցի անխափան աշխատանքին:	ուստարվա ընթացքում	տնօրեն տնտ. գծով փոխտնօրեն	
10	Խստորեն հետևել դպրոցի ներքին և արտաքին միջավայրի սանիտարական վիճակին, ապահովել դասարաններում, միջանցքներում, սանհանգույցներում բարձր սանիտարահիգիենիկ վիճակ	ուստարվա ընթացքում	տնտեսվար բուժքույր	
11	Սիստեմատիկ անցկացնել աշակերտների առողջական վիճակի ստուգումներ, պատվաստումներ, սրսկումներ, նախազգուշական միջոցառումներ վարակիչ հիվանդությունների դեմ:	ուստարվա ընթացքում	բուժքույր	
12	Պայքարել ֆինանսական ամուր կարգապահության համար, դպրոցին հատկացված միջոցներն օգտագործել պլանավորված և խելամտորեն, թույլ չտալ աշխատավարձի և մյուս միջոցների շռայլումներ	ուս տարվա ընթացքում	տնօրեն, դպրոցական խորհուրդ, հաշվապահ	